

# ԳՐԻԳՈՐ ԱՆԱԲԱՐՁԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ «ՃՐԱԳԱԼՈՒՅԻՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆՆ»<sup>1</sup> ԿԱՆՈՆԸ

ԳԷՈՐԳ ՄԱԴՈՅԵԱՆ

Լրացաւ Գրիգոր Է. Անաւարզեցի կաթողիկոսի (1293–1307) հայրապետական աթոռին քարձրանալու 700ամեակը: Սոոյ առաջին կաթողիկոսը ոչ միայն լայնատէր քաղաքական գործիչ էր, այլեւ օժտուած էր բազում աստուածատուր ձիրքերով: Մեզ են հասել նրա դրուատները, Յայսմաութքը՝ խնամքով խմբագրուած, եւ մէկական տաղ եւ նուազ: Բացի այս, Հայր Ղեւոնդ Ալիշանը լիշատակուած է նրա հեղինակութեան 33 կանոն շարական<sup>2</sup>: Դրանցից լուկ հինգն են յայտնի (նաեւ մէկ Մանկունք եւ երեք Մեծացուցէ) եւ հրատարակուած են Սահակ վարդապետ Ամատունու գրքում<sup>3</sup>:

Վերջերս մենք յայտնաբերեցինք Անաւարզեցու եւս ութ ամբողջական կանոն, այդ թւում եւ «Ճրագալուցի մկրտութեանն» երգաշարը, որ ցանկանում ենք այժմ ներկայացնել: Կանոնը արտագրուած է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի համար 732 ժողովածուի 37ա–45ա էջերից եւ հազիւ ընթեռնելի է մելանի գունաթափման պատճառով<sup>4</sup>: Անաւարզեցու շատ գործերի պէս, ներկայ կանոնը եւս բանակապ ունի. «Մկրտութեանն Քրիստոսի բան երգս» (կարգը բաղկացած է 31 տնից. եզրակապում հանուած են աւելորդ տառերը): Բանակապից երեւում է, որ միջնադարում չի գիտակցուել Փրկչի անունների տարբերութիւնը: Միայն յետագայում ուսումնասիրողները պարզեցին, թէ Յիսուսը գործածուած է Որդու երկրային գործերը լիչելիս, իսկ Քրիստոսը՝ աստուածային արարքների ժամանակ: Երեւոյթը առկայ է եւ կանոնի երգերում<sup>5</sup>:

Կանոնի 7 շարականներից էր գրուած են յանգի եւ չափի նուրբ զգացողութեամբ, որ յատուկ է Անաւարզեցուն, սակայն մենք չենք կարող դրանք բանաստեղծութիւն անուանել: Չկայ Մանուկ Արեղեանի ասած «հոգու թռիչք»ը: Նոյն պատկերն է նաեւ «Թլփատութեան» եւ նորայայտ՝ «Մենդեան Ա եւ Բ աւուր» կանոնների պարագայում, եւ պատճառը Սուրբ Գրքի կազապարն է, որ հեղինակը չի կարող եւ չի ուզում խախտել: Դժուար չէ գգալ, թէ ինչպէս կը մեկնաբանուէր միջնադարում անգամ չնչին շեղումը Աստուածաշնչից: Դրա համար շարականներում հանդիպող բազմաթիւ արտայայտութիւններ եւ մտքեր Սուրբ Գրքից են փոխ առնուած. յատկապէս աստուածաշնչեան տեսարանները վերարտադրող շարականները երբեմն բառացի կրկնութիւն են:

Պատրաստ լին, գետ Յորդանան,  
Եւ Յովհաննէս յաջորդես,

Գոչեա. «Պատրաստ արարեք.  
Զմանապարհն Տեառն ուղղեցէ՛ք»

Կամ՝  
Տեսեալ Յովհաննէս  
Գոչեաց մեծապէս  
«Ճանապարհ պատրաստ առնել  
ես ըզշաղիս Տեառն ուղղել»<sup>6</sup>:

Այս է պատճառը, որ մեր լաւագոյն շարականները ոչ թէ տէրունական տօներին նուիրուածներն են, այլ տարբեր սրբերի յիշատակին հիւսուած երգերը, ուր հեղինակը համեմատաբար զերծ է սահմանափակումից: Առանց վէճերի, միշտ բարձր են գնահատուել է. դարի կաթողիկոս Կոմիտաս Աղցեցու «Անձինք Նուիրեալք»<sup>7</sup>, ԺԲ. դարի կաթողիկոս Ներսէս Շնորհալու «Նորահրաշ»<sup>8</sup>, Գրիգոր Անաւարզեցու «Գէորդ գօրավար» կանոնը, որոնցում հեղինակները փառաբանում են քրիստոնէական հաւատի համար մարտիրոսուածներին:

Կանոնի առաջին եւ երկրորդ շարականները, որոնցից վերելում մէկական տուն էինք քաղել, լուսանցքում միայն ԲԶ գրանցումն ունեն: Լոկ ձայնն է գրանցուած երրորդ շարականի դիմաց, որ յանգի ու չափի տեսակէտից զիջում է նախորդ երկուսին:

Երկիր Չաքուղովնի Նեփթաղիմաւ ըզծագում քո լոյս աւետիս<sup>9</sup>).  
Անապատն Յորդանանու ցըմձալ հըրաւիրի.  
Որ ըզքեզ եկեալ յաջորդի:

Մի պահ թւում է, թէ առաջին տողը ընդհանրապէս յանգաւորուած չէ, սակայն յիշենք, որ տունը գրուած չէ արտասանութեան համար. այն պէտք է երգուէր: Երաժշտութեան հետ նոյնիսկ այնպէս խօսքը կարող է որպէս յանգաւոր ընկալուել, երբ անհրաժեշտ հնչիւնը, ի տարբերութիւն միւսների, աւելի երկար եւ շեշտուած է արտասանուում: Անշուշտ, շարականը կատարելիս Անաւարզեցին «աւետիս»ին այնպէս կը հնչեցնէր, որ լսողների համար ներդաշնակ կը լինէր «աւետիս, հըրաւիրի, յաջորդի» բառերի շարքը:

Լուսանցքի Գ(ործատուն) գրանցմանը հետեւում է Մեծ(ացուցէ) նշումը, սակայն Անաւարզեցին այս կանոնի համար Մեծացուցէ շարականներ չի յօրինել: Տողում կարգում ենք հետեւեալը. «Ծագումն հրաշ[ալի] Ծագումն. Առքեզ ապ[աւինիմք]»: Դրանք «Աստուածայայտնութեան ճրագալուցի» կանոնի (այժմ եւս արարողութիւնների ժամանակ երգուող) Մանկունք ԴԶ կարգի 3 տների առաջին բառերն են: Այսինքն հեղինակը Աստուածածնին փառաբանելու համար այս տներն էր երգում: Յայտնի է, որ իւրաքանչիւր կարգ Աստուածաշնչի որոշակի տողերից է ծագում: Բացառութիւն չէ եւ Մանկունքը. «Օրհնեցէ՛ք, մանկունք, զՏէր եւ Օրհնեցէ՛ք զանուն Տեառն», որ բնական է, չի կարող նոյնանալ Մեծացուցէի հետ<sup>10</sup>: Մանկունքը, որի մասին խօսում ենք, իրականում Տիրամօր Օրհնութիւնն է:

Ան քեզ ապալինիմք ամենաբարեւորի  
Գերագոյն եւ հրաշալի եւ բաշխող բարութեանց...<sup>11</sup>

*Հետաքրքիր է, որ Շարակնոցի Մեծացուցիների ցուցակում գտնում ենք այս նոյն Մանկունքի տարբերակ-սկզբնատողը<sup>12</sup>։ Բացատրութիւն գտնելը շատ դժուար է, որովհետեւ, յանձինս շարականների, գործ ունենք մի հսկայական շինութեան հետ՝ հատուածաբար եւ տարբեր դարաշրջաններում կառուցուած։*

*Կանոնի մասին վերելում նշեցինք, որ այստեղ չկայ պատկերաւոր մտածողութեան եւ ոչ մի նշոյլ։ Բայց եթէ գնահատելու փորձեր անենք, գուցէ բաւական է յիշել երգերի 700ամեայ վաղեմութիւնը։*

*Անաւարգեցին բազմիցս ենթարկուել է, յաճախ անտեղի, թէ՛ ժամանակակիցների, թէ՛ յետագայ ուսումնասիրողների քննադատութեանը։ Սակայն հիմա հարկ է արժանին մատուցել հոգեւոր մեծ առաջնորդին, գրողին ու մարդուն, հիմք ունենալով ոչ թէ անստոյգ դէպքերը, այլ նրա կեանքն ու ստեղծագործութիւնը։*

### ԿԱՆՈՎՆ ԾՐԱԳԱԼՈՒՅԻՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ

ԲԶ Պատրաստ լին Չարուղովնի երկիր եւ Նեփթաղիմայ  
Չփառս Յորդանան յաջորդեա եւ մատիր զՏէրն ընդունեա։  
Պատրաստ լին, գետ Յորդանան,  
եւ Յով[ի]աննէս յաջորդեա,  
Գոչեա, «Պատրաստ արարէք,  
Չճանապարհս Տեառն ուղղեցէք»։  
Մի անգամ քո Յորդանան  
Վրտակք գառիվեր դարձան  
Ետուր անցս Իսրայելի  
Յէտուա յախտեանցն երկրի։  
Ընդ քեզ զնորս Իսրայել,  
Յիսուս, որ Էմանուէլ  
Անցուցեալ հանէ յերկին  
Պատրաստեալ դառնալ կրրկին։  
Կողմանքըդ Չարուղովնի,  
Եւ երկիր Նեփթաղիմի,  
Պատրաստ լիք, ահա ծագի  
Մեծ լոյս ձեզ ի խատարի։  
Ընդյառաջեա՝ Յորդանան  
Ծագեալ լուսոյն ծառայման,  
Որ գայ ի Գալիլէէ  
Եւ զաշխարհս ի քեզ մաքրէ։  
Բամեալ խորհուրդքն առաջին  
Քեզ Յորդանան կատարին

Յընծայ քո անապատի  
Աւետիս տուր զի ծաղկի:  
Տեսեալ Յովհաննէս  
Գոչեաց մեծապէս  
«Ճանապարհ պատրաստ առնել  
Եւ ըզշաւէդս Տեսոն ուղղել»:  
Ոչ Աղամ բազչիս.  
Մի տերեւով Եայ ծածկիս  
Մի՞քէ մերկ ես ամաչել  
Չի գայ Քրիստոս լուսով ծածկել:  
Իիսեալ մարգարէք  
Քնար պատրաստեցէք  
Չծագունն այրն արհներգեցէք  
Եւ աւետիս մեզ հնչեցէք:  
Թաղես նոր Աղամ  
Չմեղս ի Յորդանան  
Չմաշկեղէնըն մերկանամք,  
Չգեցեալ գրեզ գոհանամք:

ԲԿ. Երկիր Չաբուղովնի Նեփթաղիմաւ ըզծագունն քո լոյս աւետիս  
Անապատն Յորդանանու ցընծայ հըրաւիրի.

Որ ըզքեզ եկեալ յաջորդի:  
Այսար Յով[հ]աննէս քեզ ճանապարհ գոչէ պատրաստել  
Քեզ շաւղղս Տէր առնել.  
Չհոգին պատրաստել:  
Նոյն եւ Եսայիաս ծայնէ յանապատին Յորդանանու  
Չբարբառդ եւ գրան Հար ծայնիս մըկրտչին՝ յորմէ մըկըրտիս  
Տէր եւ Քրիստոս քարոզի:  
Նորոգել զհնացեալս.

Ի լոյս ծագել յոգիս խաւարեալս.  
Ի Գալիլէ ծագիս լոյսդ հեքանոսաց,  
Եկեալ ի Յորդանան հատնիս,  
Հարք եւ հոգով վըկայիս:  
Քեւ ցընծամք եւ մեք ընդ անապատն Յորդանանու,  
Որ ծագելով քո Հար ծայնին  
Եւ Սուրբ Հոգւոյդ իջմամբ պայծառ  
Իբրեւ շուշան այսար ծաղկի անդաստան:  
Բամեալ ընդ քոյր արարածոց քո[ց] ստեղծուածոց  
Ծագման ճշմարիտ լուսոյդ յայտնել[ոց]  
Ընդառաջեմք հոգով  
Չյայտնեալդ յոգիս ընդունել:

Հրց. ԴՉ Ի սկզբանէ Բանդ Աստուած մարմնով ծաղկեցար փառաք ի Հարէ.  
Միածին Որդի յայտնեալ երեւեցար.  
Արհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:  
Սուրբդ Աստուած սրբիչ.

Որ զմեղս մաքրեցեր  
Գաս մարմնով մաքրիլ[չ<sup>9</sup>] հոր ծախիչ,  
Որ զՅովհաննես նախ սրբեցեր,  
Արհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:  
Տէր, որ զԵսայեայ շրթունս մաքրեալ  
Չմեղսն սրբեցեր,  
Կայծակն երեւեալ

- Գաս ըզմեղաց հոսանս ի ջուրս կիզել,  
Արհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:  
Գ. ԸզՏէր Արհնեցեր, բարձր արարէք ըզնա յախտեան:  
Որսայ [որս Աստուծոյ] Աստուած մեր կանխածայնէ[<sup>9</sup>]  
բարուք ի յերկրի երեւեալ շրջի  
Եւ ընդ մարդկան գայ մըկըրտել,  
Բարձր արարէք ըզնա յախտեան:  
Սպասեալ Յով[հ]աննես կայր ի Հարւէ լլուեալ,  
գոր ետես եկեալ  
Չայն բառնայր ի քէն մըկըրտել,  
Բարձր արարէք ըզնա յախտեան:  
Ի Գալիլէ ի Յորդանան եկեալ, գորս անդ ժողովեալ  
Չպարտեալսն առ Յով[հ]աննես լուսաւորէ զհոգիս,  
Բարձր արարէք ըզնա յախտեան:

Մեծացուցէ] *Ծագումն հրաշ[ալի]: Ծագումն: Առ քեզ սալ[ախնիւք]:*  
Ո[ղորմեալ] Բանդ, որ մարմնով երեւեցար

Մերս հոգով արդարացեալ,  
Գաս՝ երեւելի փառակցաց,  
Հաւատարիմ անփորձ մեղաց  
Չբնութիւնըս մեր փրկել  
Չհայրն չարեաց դատախարտել,  
Որով եւ մեք արհնաբանեմք,  
Ծագման Քրիստոս Տէր երկրպագեմք:  
Անճառ ծածկեալ լոյսի ի մարմնի  
Գաս ի ծագել զնշոյլ շնորհի  
Չբանեալ ի ջուրս ըզթընամին  
Գաս ըմբռնել անդէն ի նմին  
Փրչրել խոնարհութեամբ,  
Որով եւ մեք արհնաբանեմք,  
Ծագման Քրիստոս Տէր երկրպագեմք:  
Նմանութեամբ մարմնոյ մեղաց  
Միայն ամբիծոյ ի յանցանաց  
Ընդ զգացեալ մեղուցելոցն  
Ի Յովաննէ մըկրտելոցն,  
Անմեղ ընդ մեր մաքրիլ,  
Որպէս կարատ գաս մըկրտիլ:

Որով եւ մեք արհնաբանենք,  
 Ծագման Քրիստոս Տէր երկրպագենք:  
 Վիշապին զգլուխ սկիզբն շարեաց,  
 Չհայարտութեանն ախտ յանցանաց,  
 Ի վերա[յ] ջ[ուրց] խոնարհութեամբ,  
 Ի ծառայէն մըկրտութեամբ  
 Փըշրեալ խորտակե[ցեր]  
 Եւ զընկղմեալս վեր ածէր,  
 Որով եւ մեք արհնաբանենք,  
 Ծագման Քրիստոս Տէր երկրպագենք:  
 Տ[էր Յերկնից] Երկնի հրեշտակք ամենեքեան  
 Պատրաստեցէք երգս արհնութեան,  
 Եւ Յորդանան, դու պատրաստ լեր՝  
 Քանզի Քրիստոս գայ մըկրտել,  
 Չուրբ զվիշապին ըզգլուխ փըշրել  
 Եւ ըզտիեզերս ի քեզ մագրել:  
 Բոտեալ մաշկեակ քեզ բաժանեաց  
 Ոչխարն որչափ ինչ ներգործեաց[°],  
 Չի գմեղաց գետ պատառէ,  
 Բաց յաշխարհէ ի խորս հոսէ,  
 Որում է ծով կաթի դուլէ[°],  
 Չլերինս եւ բլուրս կշռեալ չափէ:  
 Գոչեա՛ եւ դու, զոր ծանուցեր  
 Չգառն, որ յարգանդ երկրրպագեր,  
 Ըզնայ պ[ատրաստ] եա արդ Յով[հ]աննէս  
 Չեռամբ ի ջուրբ շաշափել,  
 Փութա մի՛ հրաժարել,  
 Չի գայ զբնութիւնդ քո սրբել:  
 Սպասել պատրաստութեամբ  
 Յայտնութեան քո Տէր մաքրութեամբ  
 Չմեզ զանարժանքս արժանացոյց,  
 Ժամանելով արդ զորացոյց,  
 Ըզսիրտս պատրաստել քեզ ճանապարհ  
 Յոգիս առնել Հարբ [անընթ.]  
 Եւ Հոգով զեկեալդ արհնել,  
 Փառք ի բարձունս երգել:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ծրագալուցի կոչում է «զի երզի 'ի հսկման ա[ստուա]ծայայտնութե[ան], այ[սինքն] յաւորն՝ որ յառաջէ քան գոսն ա[ստուա]ծ[այայտնութեան]: Բառն Ծրագալուց առեալ է 'ի յունաց, յորմէ եւ յատինացիք կոչեն յուչեռնա՝ ոխում. այ[սինքն] Ծրագաց. կամ Ծրագավառ. որով նորա իմանան սովորաբար գերեկոյեան ժամակարգութիւնն. զի առ հինսն կատարիւր մօտ 'ի մութն երեկոյին յուցմամբ Ծրագացն». Հայր Գաբրիէ Աւետիքեան, *Քացապրութիւն շարականաց*, Վենետիկ, 1814, էջ 44:
2. Հայր Անտոն Ալիշան, *Սխուման եւ Լևոն Մեծագործ*, Վենետիկ, 1885, էջ 242:
3. Սահակ Վարդապետ Ամատունի, *Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականներ*, Վարդաշապատ, 1911, էջ 46: Ամատունին դրանցից ոչ բոլորն է վերագրում Անաւարզեցուն: Նոյն տեղում, մասնատրապէս «Շարական սրբոյն Գեորգայ զօրավարին» կանոնի մասին, նա գրում է. «... շարականներին գրութիւնը շատ հեռու է Անաւարզեցու կոչու եւ պլոշտ լեզուից, կարդա համար 6»: Սակայն Ամատունին չի նկատել մի կարեւոր նմանութիւն. Անաւարզեցին յաճախ կանոնի մի կամ մի քանի շարական աւարտում է Աստուածածնի փառաբանութեամբ: Տես՝ «Թլխատութեան» կանոնը (որ Ամատունու ասած «համար 6»ն է) Օրհ[նութիւն] քվ. տուն 7. Ող[որմեա], տուն 4, եւ «Գեորգ Զօրավար»ին Օրհ[նութիւն] դժ. տուն 6 եւ տուն 11: Նման օրհնակներ կան հեղինակի այլ շարականներում եւս:
4. Զեռագրի մասին տես՝ *Յուցակ Զեռագրաց Մաշտոցի Անուան Մարենադարանի*, կազմեցին Օ. Եզանեան, Ա. Զէթունցեան, Փ. Այնքարեան, հատոր Ա., Երեւան, 1965, սիւնակ 395–396:
5. Տես՝ հրապարակուող կանոնի Տէր Յերկնիցի առաջին տունը:
6. Հմմտ.՝ *Աստուածաշնչի* Ես. Խ–3, Մատթ. Գ–3, Մարկ. Ա–3, Մովս. Գ–4, Յովհ. Ա–23: Եսայի մարգարէն այս շարքի մէջ ընդգծում է նրանով, որ նախապէս էր գուշակել Յիսուսի մկրտուելը, տեսել էր յոյսը՝ նախքան յոյսը կը գար: Նման գուշակութիւնների համար մեր նախնիները մարգարէներին համեմատել են վառուած ճրագների հետ, «որք նշանակեն զաղօտ ծագումն մարգարէից յառաջ քան զերեւել Արեգականն արդարութե[ան]». *Քացապրութիւն*, էջ 44:
7. Այն նուիրում է Հռիփսիմեանց կոյսերին:
8. Այն նուիրում է Աւարայրի մարտիրոսներին:
9. *Շարական հոգևոր կրօնք*, Երուսաղէմ, 1936, էջ 36:
10. *Աստուածաշունչ Մայրեան*, Վիեննա, 1929, «Մաղմուսաց» ԾԺԲ (ԾԺԳ), էջ 644:
11. Համարում է, որ «Աստուածայայտնութեան Ծրագալուցի» կանոնի հեղինակը Մովսէս Խորենացին է, քայց Հայր Գաբրիէլ վարդապետ Աւետիքեանը յիշում է նաեւ Վարդան Վարդապետի խօսքերը. «... սակայն Վարդան Վարդապետ 'ի տեսութեան Անթառան ծաղկին՝ երկբայական ոճով յիշէ զայս, ասելով՝ եթէ Մովսէս Խորենացին ասաց, եւ կամ մեծ ճգնաւորն Բարսեղ Եոն». *Քացապրութիւն*, էջ 45:
12. *Շարական*, էջ 1023. այստեղ այն յիշում է «Ի քեզ եմք ապաիւնեալ» ձեռով:

## THE CANNON OF "CANDLE LIGHT BAPTISM"

Written by Grigor Anavarzetsi  
(Summary)

GEVORG MADOYAN

Catholicos Grigor Anavarzetsi, who lead the Armenian church between 1293 and 1307, was not only a circumspect political actor but a talented author as well. Though he had authored over 33 canonized Sharakans, only five of them are known to scholars. The author has uncovered 8 heretofore unknown cannons of catholicos Anavarzetsi one of which is the candle-light baptism cannon; this he has copied from a manuscript stored in the Mashtots Matenadaran of Erevan.

The cannon consists of 31 verses which constitute 7 sharakans. According to the author, these Sharakans can not be considered poetry in the full sense of the word, because most of the best Armenian Sharakans are those which have little to do with biblical events and ceremonies, since the authors do not find themselves restrained with a set of fixed terminology and scenery.